ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

3 դեկտեմբերի 2012 թ. թիվ 116-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ,,ԲԵՐԴԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ'' ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՊԱՏԿԱՆՈՂ ՈՒԱԶ ԵՎ ՎԱԶ ՄԱԿՆԻՇԻ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՕՏԱՐՈՒՄԸ ԹՈՒՅԼԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Բաժնետիրական ընկերությունների մասին'' Հայաստանի Հանրապետության օրենքի 68-րդ հոդվածի 6-րդ կետի և Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ,,Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին'' ՆՀ-728 հրամանագրի 1.5 կետի ,,ժբ'' ենթակետի դրույթներով, հիմք ընդունելով ,,Բերդի բժշկական կենտրոն'' փակ բաժնետիրական ընկերության տնօրենի 2012թ. նոյեմբերի 27-ի թիվ 179 գրությունը

ո ր ո շ ու մ եմ.

1. Թույլատրել ,, Բերդի բժշկական կենտրոն '' փակ բաժնետիրական ընկերությանը աճուրդային կարգով օտարելու ընկերության հաշվեկշռում գտնվող 1991թ. արտադրության 2 հատ ՈՒԱԶ 3962 մակնիշի և 1989թ. արտադրության 1 հատ ՎԱԶ 2121 մակնիշի ավտոմեքենաները:
2. Ընկերության տնօրենին՝ հիմնական միջոցի օտարումն իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, ՀՀ ԿԱ պետական գույքի կառավարման վարչության ,,Աճուրդի կենտրոն'' պետական ոչ առևտրային կազմակերպության միջոցով:
3. ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Ա.ՂՈՒԼԱՐՅԱՆ

2012թ. Դեկտեմբերի 3
Ք. Իջևան